

# ԱՄԵՐԻԿԱՐԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ,  
Պատմական գիտությունների թեկնածու



Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական եւ այլ հանգամանքներից ելնելով: Սկզբում կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխտների (գլխավորապես ամուրի երիտասարդներ՝ ուսանող, առետորական, արհեստավոր, հողամշակ, գործավոր) ժամանակավոր տեղաշարժ էր, որը որպես Օսմանյան կայսրությունում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի (1894-1896 թթ., 1909) եւ Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) հետեւանք վերածվել է տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված եւ հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող զանգվածային գաղթի՝ ընդգրկելով կայսրության ողջ հայաբնակ շրջանները, այդ թվում նաեւ Կիլիկիան:

1909-ին Ադանայում (Կիլիկիա) երիտթուրքերի իրականացրած գարհուրելի ջարդերը վերջնականապես ի դերեւ են հանել իրենց «դեմոկրատական» հռչակած իշխանությունների նկատմամբ հայության փայփայած վերջին հույսերը՝ մղելով նրանց դեպի անձանոթ հորիզոններ: Թեեւ ջարդերը տեղի էին ունեցել Կիլիկիայում, հայերը հեռանում էին կայսրության հայաբնակ

գրեթե բոլոր շրջաններից, քանի որ այդ վայրերում եւս նույնպիսի իրավիճակում հայտնվելու սարսափը չափազանց մեծ էր:

Նոր երկրում պանդուխտ հայերի եւ գաղթական բեկորների թվի ստվարացումով եւ այնտեղ նրանց տարածմանը զուգընթաց՝ հայաշատ գրեթե բոլոր վայրերում կազմավորվել են ազգապահպան կարեւոր դեր ու նշանակություն ունեցող կառույցներ (եկեղեցի՝ առաքելական, ավետարանական, կաթողիկ, դպրոց, պարբերական մամուլ՝ հայերեն, հայատառ թուրքերեն, անգլերեն), ինչպէս նաեւ կրթական, մշակութային, բարեսիրական, հոգեւոր, սոցիալական, քաղաքական ու այլ բնույթի մեծ ու փոքր ազգային միություններ ու տարբեր կազմակերպություններ (հայրենակցական, կուսակցական, մասնագիտական եւ այլն):

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին եւ հետո Կովկասում, ապա՝ Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915-ի Վանի ինքնապաշտպանական կռիվներից մինչեւ 1918-ի Արարայի հերոսամարտը՝ Անտանտի տերությունների, ցարական Ռուսաստանի եւ Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք կողքի քաջաբար մարտնչելով գերմանական ուժերի եւ երիտթուրքական ու քեմալական իշխանությունների դեմ: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ «Ինքնավարութիւն վեց վիլայեթներու եւ անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի»:

1916-ի հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Լոնդոնում համատեղ համաձայնության էին եկել (Սայքս-Պիկոյի համաձայնություն) կազմելու հայ, ինչպէս նաեւ արաբ կամավորներից բաղկացած Արեւելյան լեգեոն (Légion d'Orient) անվանումը կրող զորամիավոր, որը, իբրեւ օժանդակ ուժ, պատերազմի տարիներին Ֆրանսիական բանակի կազմում պիտի կռվեր բացառապէս ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում եւ Կիլիկիայում, այնուհետեւ՝ թուրքերի դեմ հաղթանակից հետո որպէս քաղաքապահ ուժ, ապահովեր Ֆրանսիական հովանավորության ներքո Կիլիկիայի ինքնավարությունը: Արեւելյան լեգեոնի կազմակերպման ծախսերն իր վրա էր վերցնելու Ֆրանսիական կառավարությունը, որը հոգալու էր կամավորների տեղափոխման ճանապարհածախսը, հիվանդության ու հաշմանդամության ծախսերը: Կամավորները, որոնք պետք է ներկայացնէին լավ վարքի վկայական, մարզվելու եւ ղեկավարվելու էին Ֆրանսիական

սպաների եւ ենթասպաների կողմից, վարձատրվելու էին ֆրանսիական զինվորների նման, ստանալու էին նույն պարենը, ինչ ֆրանսիացի զինվորը: Լեգեոնը սկզբնապես հաստատվելու էր Կիպրոսում՝ Մոնարկա ծովեզրյա սարահարթային վայրում, ուր ժամանելու էին Մարսելի, Բորդոյի եւ Պորտ Սաիդի գրասենյակներում գրանցված տարբեր վայրերից ժամանած հայ կամավորները: Սայբու-Պիկոյի համաձայնագրի մեջ նշված էր. «1. Որ կամավորները ո՛չ Ֆրանսական, ո՛չ ալ Եւրոպական ուրիշ ճակատներու վրայ պիտի կռուին, այլ միայն ու միայն ասիական Թուրքիոյ մեջ պիտի գործածուին՝ իրենց դարաւոր թշնամիին դէմ պատերազմելու եւ ազատագրելու իրենց մայրենի հողը: 2. Որ՝ Ֆրանսա, Դաշնակիցներու յաղթանակէն յետոյ, պիտի նուիրուի Կիլիկիոյ ինքնավարութիւն ապահովելու գործին, իր հոգատարութեան ներքեւ»:

1916-ի նոյեմբերի 26-ին հիմնվել էր օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված Արեւելյան լեգեոնը: Կամավորագրումը սկսվել է Եգիպտոսում, որի կորիզը կազմել են 600 մուսալեռցիներ (ֆրանսիայի շնորհիվ Պորտ Սաիդում ապաստանածներից), ապա նաեւ՝ 300 եգիպտահայեր, օսմանյան բանակից ու այլ վայրերից փախստական 236 հայեր:

Կամավորական շարժումը մեծ ոգեւորություն է առաջացրել տարագիր հայության, հատկապես՝ ամերիկահայության շրջանում: Համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսեւորած բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր էր դարձել 1917-ի մարտի 16-26-ը Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջեւ համերաշխության բանակցությունների, կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ), բաղկացած քաղաքական չորս կուսակցությունների (ՍԴՀ, Վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, ՀՍՌ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) եւ ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Միությունը (ատենապետ՝ Միհրան Սվազյան) կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծել էր 187 մասնաճյուղ, ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում:

Կարճ ժամանակում՝ ընդամենը վեց ամսում (1917-ի հունիսի 9-նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժանը մասնակցելու նպատակով արձանագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական

միջոցների տղության պատճառով (մեկ-երկու մեծ փոխադրանավ տրամադրելու փոխարեն հատկացվել էին առավելապես յոթ տասնյակ մարդ փոխադրող, ոչ բավարար տարողության 17 բեռնակիր նավեր) մեկնելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին (որոնցից վերապրել է ընդամենը 250 հայ), իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արեւմտյան ճակատներում:

Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերոցի, արաբկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ: Կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաեւ մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ՝ Զիմ Չանգալյան՝ կրտսեր ենթասպա, հիսնապետ, Յայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Յերյան՝ կրտսեր ենթասպա, տասնապետ, Գարակյոզյան՝ տասնապետ, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան՝ տեղապահ եւ այլք):

Ամերիկայի հայ ազգային միության ներկայացուցիչ Ռուբեն Յերյանն անձամբ ինքն է մասնակցել ամերիկահայ կամավորների ինքնության փաստաթղթերի պատրաստմանը Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնասրահում: Միհրան Տամատյանի բնորոշմամբ. «Հագարաւորներ կը ձգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապահով կէանք ու փայլուն ապագայ՝ զօրացնելու համար կորիզը «հայկական բանակին»: ...Եկեղեցւոյ սրահը տեսակ մը ուխտատեղի դարձած էր: Իւրաքանչիւր կամաւոր, Աստուծոյ տան մէջ, իւրովի եւ անձայն կը մրմնջէր աղօթք մը եւ խնդրանք մը ուղղուած Հայուն Աստուծոյն որ զինք ապահով առաջնորդէր մինչեւ կռուի ճակատ, ուր ինք պատրաստ էր իր կէանքը ի սպաս դնելու հայ ժողովուրդի ազատագրութեան սուրբ դատին»:

Համաձայն Փարիզի Ազգային պատվիրակության եւ ֆրանսիական կառավարության միջեւ կայացած պայմանավորվածության, ամերիկահայ կամավորները Նյու Յորքից Բորդո պիտի մեկնեին ֆրանսիական փոխադրանավերով եւ Ամերիկայի հայ ազգային միության ծախսով: Բորդոյում ֆրանսիական զինվորական ղեկավարության քննությունն անցնելուց հետո նրանց պիտի արձանագրեին ֆրանսիական

հրամանատարության ներքո կռվելու համար: Իսկ դաշնակից տերությունների համար պատերազմի բարենպաստ ավարտի դեպքում Կիլիկիայի պաշտպանությունն անցնելու էր հայ զինվորականությանը:

Կամավորագրվածները նախնական վարժանք էին անցնում Փաթերսոնում (Նյու Ջերսիի նահանգ), գրանցվում Նյու Յորքում, ապա նավով մեկնում Բորդո կամ Մարսել (Ֆրանսիա), ապա՝ Պորտ Սաիդ (Եգիպտոս) կամ Մոնարկա (Կիպրոս)՝ զինվելու եւ ամիսներով վարժանքներին մասնակցելու:

Արարայում զոհվեց 22 եւ վիրավորվեց ավելի քան 70 հայ: Լեգեոնական լեյտենանտ Վահան Փորթուզայանի բնորոշմամբ. «Չայկական լեգեոնը, որպես զինյալ բանակ, բառիս իրական եւ ամբողջական իմաստով, առաջին հայկական ռազմական ուժն էր, որը ստեղծվել էր դարեր անց պետական սկզբունքների հիման վրա»:

Ամերիկահայ կամավորներն Արեւելյան լեգեոնի իրենց քաջարի հայրենակիցների հետ լուրջ ավանդ են ներդրել Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների վրա գերմանա-թուրքական բանակին պարտության եւ նահանջի մատնելու գործում: Ժամանակակցի նկարագրությամբ. «...Արեան դեմ վրեժ, ու մահուան դեմ ազատութիւն մռնչող առիւծները, վճռականօրէն խոյացան դէպի թրքական խրամատները... Կարճ եղաւ ընդհարումը ու սաստիկ... Անարգ թշնամին իր դեմ ցցուած վրիժառու սուիներէն ինքզինք պաշտպանելու անկարող՝ լքեց իր պաշտպանութեան բոլոր լաւագոյն դիրքերը եւ բռնեց փախուստի ճամբան...»:

Սիրիական ռազմաճակատի ընդհանուր հրամանատար, անգլիացի գեներալ Է. Յ. Ալենքին հայ ազգային հաստատություններին հղած պատասխան շնորհակալական հեռագրերում իր գոհունակությունն ու հպարտությունն է արտահայտել Արարայի ճակատամարտում հայ լեգեոնականների ցուցաբերած խիզախության եւ անձնագոհության առիթով: Այսպես, 1918-ի սեպտեմբերի 25-ին Եգիպտոսի հայ ազգային միությանը գրել է. «...Չպարտ եմ յայտնելու որ ձեր հայրենակիցները գործնական մասնակցութիւն ունեցան մեր կռիւներուն եւ յաղթութեան մէջ: Արեւելեան Լեգեոնի ֆրանսիացի հրամանատարը եւս գոված է տոկունութիւնն ու եռանդը Չայ զինուորներու, որոնց հաւատարմութիւնը դաշնակիցներուն հանդէպ ամեն կասկածէ վեր է»:

Ղաշնակից տերութիւններն ու ԱՄՆ-ը, բարձր գնահատելով իրենց հանդէպ հայերի ցուցաբերած անմնացորդ նվիրվածութիւնը, հայ ժողովրդին համարել են իրենց «փոքրիկ դաշնակից»:

Այնուհետեւ լեգեոնականները մասնակցել են Սիրիայի եւ Լիբանանի համար մղված մարտերին. դաշնակից ուժերի հետ շարժվել դէպի Ղամասկոս, Յալէպ, մինչեւ Պոզանթիի լեռները, ապա Պաղեստինի միջով՝ դէպի Բեյրութ, որտեղ, սիրիական զորամիավորների անջատումով, Արեւելյան լեգեոնը վերանվանվել է Յայկական լեգեոն (Légion Arménienne), մեկ ամիս շարունակ իր գրավման տակ է պահել Պաղեստինը, Լիբանանը:

1918-ի հոկտեմբերի 30-ին Մեծ Բրիտանիայի եւ սուլթանական Թուրքիայի միջեւ կնքված Մուդրոսի զինադադարն ամրագրեց Օսմանյան կայսրութեան կապիտուլյացիան եւ 16-րդ հոդվածի համաձայն թուրքական զորքը պետք է դուրս բերվեր Կիլիկիայից: 1918-ի դեկտեմբերի 17-19-ին Յայկական լեգեոնը ոտք է դնում բաղձալի Կիլիկիա՝ վերահսկելու եւ պաշտպանելու ռազմավարական հենակետեր, հայաբնակ Ադանան, Այնթապը, Մարաշը, Ուրֆան, Յաճընը: Յայոց ցեղասպանութեան հետեւանքով Կիլիկիայից տեղահանված շուրջ 120.000 հայ վերադառնում է իր հայրենի օջախները՝ հուլիսով, որ անգլո-ֆրանսիական ուժերի պաշտպանութեան ներքո խաղաղությամբ կվերականգնեն իրենց ընդհատված կյանքը Կիլիկիայում: Սակայն 1919-ի նոյեմբերի 1-ին անգլիական, իսկ 1920-ի հունվարի 18-ին ֆրանսիական զորամիավորումները հեռանում են Կիլիկիայից՝ հային «յանձնելով իր անագորոյն թշնամիին ձեռքը»:

Յայկական լեգեոնը Յայոց ցեղասպանութիւնից ընդամենը երկու տարի անց ձեւավորված առաջին զուտ հայկական զորամիավորն էր՝ տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Յարավային Ամերիկա, Ավստրալիա եւ այլն) ժամանած 4.000-5.000 պանդուխտների մասնակցությամբ, արդիական բանակի կազմությամբ, ռազմամթերքով, թեեւ ֆրանսիական բանակին առընթեր, սակայն նրանից անջատ, իր յուրահատուկ ազգային դիմագծով: Այն իր կազմությամբ՝ բարձրաստիճան հրամանատարական կազմով, աստիճանակարգված զինվորականներով, զենքով ու զինամթերքով, ռազմական այլ հատկանիշներով ու կարգապահությամբ լիովին համապատասխանում էր ժամանակի առաջավոր բանակներին: Յայ կամավորների թվի ստվարացումով 1918-ի հոկտեմբերի

կեսերին Բեյրութում ստեղծվել է լեգեոնի արդեն 4-րդ գումարտակը Կիպրոսից ժամանած պահեստայիններից:

1920-ին Մարաշում, Սիսում, Պոզանթիում, Ուրֆայում, Այնթապում (ընդհատումներով 314 օր), Յաճընում (8-ամսյա գոյամարտ) հայ զինվորն ու ժողովուրդը հերոսական դիմադրություն են ցույց տվել քեմալական հորդաներին, սակայն զոհերի թիվը գերակշիռ էր:

1921-ի հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-քեմալական դաշնագրով Ֆրանսիան պաշտոնապես ամրագրեց իր նահանջը՝ Կիլիկիան թողնելով թուրքական տիրապետության ներքո, վերջինիս տրամադրելով մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հանդերձանք եւ այլն:

Կիլիկիայի պարպումը հայերին ստիպեց կրկին արտագաղթել: Պատմաբան Լեոն այս առիթով գրել է. «Կիլիկիան դատարկվում էր հայությունից, ինչպես դատարկվել էր բուն Հայաստանը»:

Արարայի հերոսամարտից 20 տարի անց Ֆրանսիան Թուրքիային է հանձնել նաեւ մինչ այդ ֆրանսիական հովանավորության տակ գտնվող Կիլիկիայի վերջին պատվարը՝ Ալեքսանդրետի սանջակը:

Թեեւ Կիլիկիայի ազատագրման համար գործադրած ջանքերը վերջին հաշվով ձախողվեցին, այդուհանդերձ, անուրանալի էր նաեւ ամերիկահայ կամավոր երիտասարդության մասնակցության նշանակությունը Արեւելյան լեգեոնի (Հայկական լեգեոն) ձեռք բերած մարտական հաջողությունների գործում:

Այնպես որ, հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտին եւ հաջորդող տարիներին ամերիկահայությունը, համախմբելով իր ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական եւ այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային եւ հնարավոր բոլոր միջոցներով սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանության, ազատագրության ու վերականգնման նվիրական գործին:

## Survivors



*born 1902, Sepastia (Sivas)*

### **EDWARD BEDIKIAN**

There was a girl, a girl who I had befriended on the road, earlier. Her name was Satenig. I remember her very well. She was not too strong. I saw her again in that basement. In the basement of the school where they had thrown us. She was there. She had a little bit of money and she gave it to me. "Don't let them take me," she said. "Don't let them take me." They would come around everyday and take whoever was dead or very weak. She was not in good shape, she was very weak. I stood her up and leaned on her. Held her up, so. They came. I was holding her up, leaning her up against the wall. But they saw her and took her... took her...